



101. ԲՈՁԻՆ ՔԱՌՍՈՒՆ ՕՐ Է

Գեղի ռես աչք կը թալե հարսի մե, ըդրան օր ու արև շիտա,  
հարս կը գանգըտի իրկան:

— Հա՞,— կըսե իրիկ,— կա՛նի հմալ օղյաթ մե խաղամ, օր  
ըսկի չը մոռնա:

Գեղնա կէրթա մըտ ռեսկնիկ, կը քաշե մեկ դեն, կըսե.

— Ռես քաղաք կէրթեր, ճամպին ընձի տեսավ, թանրի էրեց,  
օր գամ ըսիմ՝ քաղքից հըտ խայմախամին պտի դառնա, շուտ թըղ  
էրկոս օշխար մորթին, հաց-զատ պատրաստին, հարի գանք:

Ռեսկնիկ կը խառվի չիրար, ձեռաց էրկու օշխար մորթել կիտա,  
տեսակ-տեսակ կերակուլներ կը պատրաստե, բաքլա կէնե, օր ռեսն  
հըտ խայմախամին գա:

Ռես՝ գեղամիջեն օր գիկա տուն, կնիկ կըսե.

— Հըտ խայմախամին պտի գե՞ր, խայմախամն յո՞ւր է:

— Ի՞նչ խայմախամ, կնիկ:

— Հշտե հմլա-հմլա բա՛ն,— կըսե կնիկ:

Ռես դիմնա, թե էդ սատանութեն հարսի մարդն չորի՛ն է էրի,  
կըսե.

— Կնի՛կ, քու սիրտ մը կո՛տրի, օղորմի գործ բռնողի հոր ու մոր  
հոգուն, թե չէ՝ քառսուն օր չետե՛ քառսուն օշխրո՛վ լե չը պրծնենք  
շանօրդուց:

